## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<19>> մայիսի 2021թ. N ՄՊ/156 - 2021

ք. Արմավիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 182-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի հուլիսի 24-ի N 1791-Ա հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետը և <<Մեծամորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2021 թվականի մայիսի 5-ի N 152 գրությունը.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի սեպտեմբերի 23-ի <<Միքայել Վանյանին <<Մեծամորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն նշանակելու մասին>> N 182-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) որոշմամբ հաստատված հավելվածի 4.1 կետում <<360000 (երեք հարյուր վաթսուն հազար))>> բառերը փոխարինել <<435.000 (չորս հարյուր երեսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ և յուրաքանչյուր ամիս վճարովի ծառայություններից 1 տոկոսի չափով որպես բոնուսային վճար:>> բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 19.05.2021 12:17:40 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230